ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆԴՐԱՁԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ. ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԸ

ԴԱՍ 7

ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆԴՐԱՁԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ. ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԸ

«Հեռաուսուցման դասընթացների մշակում Արդարադատության ակադեմիայի համար» ծրագիրը ֆինանսավորվել է ԱՄՆ Պետքարտուղարության Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության բյուրոյի կողմից և իրականացվել է «ՓԻ-ԷՅՉ Ինթերնեշնլ» կազմակերպության կողմից՝ Արդարադատության ակադեմիայի հետ գործընկերությամբ: Սույն նյութում արտացոլված են հեղինակների տեսակետները, մեկնաբանությունները և եզրակացությունները, որոնք կարող են չհամընկնել ԱՄՆ Պետքարտուղարության տեսակետների հետ:

ԴԱՍ 7

ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱՀՐԱՎԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Այս դասը կազմված է հետևյալ 4 բաղադրիչներից.
մոտիվացնող ներածական տեսանյութ,
դասի տեսական նյութ,
բառարան և
ինքնաստուգիչ հարցեր:
Բոլոր բաղադրիչների յուրացման համար
Ձեզ հարկավոր է 4 ժամ:

Ինքնաստուգիչ հարցերը և բացատրություններով ուղեկցվող դրանց պատասխանները ներառված չեն այս ձեռնարկում:

ՄՈՏԻՎԱՑՆՈՂ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՏԵՍԱՆՅՈՒԹ

Տեսանյութն ուշադրությամբ ուսումնասիրելու համար անհրաժեշտ է մոտ 5 րոպե:

Ուշադրությամբ կարդացեք դասի տեսական մասը՝ օգտվելով բառարանից, և այն յուրացնելուց հետո միայն պատասխանեք ինքնաստուգիչ հարցերին:
Այս աշխատանքների համար անհրաժեշտ է մոտ 205 րոպե:

Կորոնավիրուսի հանցագործությունների դեմ պայքարին ուղղված պետության քաղաքականության շրջանակներում կարևոր տեղ են զբաղեցնում կազմակերպաիրավական միջոցառումները:

Հանցագործությունների այս տեսակի դեմ պայքարը համաշխարհային հանրության կարևորագույն խնդիրներից մեկն է: Այս երևույթներն այս կամ այն չափով առկա են ցանկացած պետության ներսում, որոնք գնալով խորացնում են հակասությունները պետության և հասարակության միջև: Դրանք էապես խոչընդոտում են հասարակության զարգացմանը, քանի որ ստեղծում են անհաղթահարելի պայմաններ հասարակության սոցիալ-տնտեսական զարգացման համար: Այն ընդգրկում է ինչպես ընդհանուր սոցիալական, այնպես էլ իրավական ոլորտները:

Օրենսդրության և պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ներկա ժա-

մանակահատվածում ոչ մի պետություն չունի լիարժեք գործուն միջոցներ դրանց հակադրվելու համար: Շատ հաճախ հակակոռուպցիոն ռազմավարությունները ձախողվում են: Դրանով է պայմանավորված կոռուպցիայի և կազմակերպված հանցավորության դեմ պայքարի իրականացման համար միջազգային հանրության կողմից համապատասխան միջոցների ձեռնարկումը: Շատ դեպքերում ձեռնարկվում են առանձին միջոցներ՝ կոռուպցիոն կոնկրետ երևույթի դեմ պայքարի իրականացման համար, քանի որ այն համակարգային բնույթ չի կրում, հետևաբար դատապարտվում է անհաջողության:

Այսօր նշված հանցագործությունների դեմ պայքարի իրականացման համար կարևոր է օրենսդրական բնույթի փոփոխությունների կատարումը, մասնավորապես, քրեական, քրեական դատավարության, քաղաքացիական, բանկային օրենսդրության և այլ ոլորտներում: Նշված ոլորտի հանցագործությունների քննության համար այսօր էական խոչընդոտ է մասնագիտական գիտելիքների, ինչպես նաև դրանց քննության համար հատուկ մշակված մեթոդիկայի պակասը: Հաճախ են հանդիպում դեպքեր, երբ մասնագիտական գիտելիքների պակասի պատճառով մերժվում, կասեցվում կամ կարճվում են քրեական գործերը:

Կոռուպցիոն հանցագործություններն առանձնանում են իրենց բարդությամբ, կատարվող քննչական և դատավարական գործողությունների շարքում բավական մեծ են դատահաշվապահական փորձաքննություն-

Մինչ պարբերությանը ծանոթանալը՝ թվարկեք կոռուպցիոն հանցագործությունների դեմ պայքարի արդյունավետության բարձրացման համար Ձեզ անհրաժեշտ թվացող միջոցներ:

ների իրականացման ծավալները: Դրանց համար հատկապես կարևոր է հետևյալ տեղեկությունների օգտագործումը.

- հաշվապահական և այլ գրառումների (տվյալների էլեկտրոնային բազայի, հաշվապահական ընդհանուր գրքույկների, հաշվապահական հաշվառման), բանկային հաշիվների, հաշիվների, հարկերի և այլ հայտարարությունների, այլ առաջնային փաստաթղթերի վերլուծությունը,
- ներկա և նախկին աշխատակիցների հարցումները (կառավարում, ֆինանսական բաժին և հաշվապահություն, հանրության հետ կապերի (PR), տեղեկությունների հարցման (IR), ապրանքների գնման (GR) անձնակազմի, վաճառքի և մարքեթինգային անձնակազմի, գործառնական անձնակազմի, անվտանգության աշխատակիցների և այլն),
- զրուցակիցների, ենթակապալառուների, մատակարարների և այլ կապալառուների հարցաքննությունները,
- պայմանագրերի, համաձայնագրերի և այլնի ուսումնասիրությունը,
- պարբերականների և հրապարակումների վերլուծությունը,
- առևտրային պալատների հետազոտությունները (ուղղակի կամ կորպորատիվ տվյալների բազաների միջոցով),
- SS համակարգերի օգտագործումն ավելի լայն իմաստով,
- այլ ընթացակարգեր (օրինակ, աշխատակիցների կենսակերպը եկամտի հետ համեմատելը):

Մտապահեք ՀՀ-ում կոռուպցիայի դեմ պայքարի իրավական հիմքերը:

ՀՀ-ում կոռուպցիայի դեմ պայքարի իրականացման համար իրավական հիմք են կազմում հետևյալ փաստաթղթերը՝

1 **ՀՀ նախագահի 2011թ.-ի դեկտեմբերի 29-ի ՆԿ-232-Ն կարգադրությամբ հաստատված՝ ՀՀ-ում կազմակերպված հանցավորության դեմ պայքարի արդյունավետության բարձրացման ազգային ծրագիրը,**

2 ՀՀ կառավարության 2014թ.-ի ապրիլի 10-ի նիստի թիվ 14 արձանագրային որոշմամբ հաստատված՝ «Հանրային կառավարման համակարգում կոռուպցիայի դեմ պայքարի հայեցակարգը»,

3 ՀՀ կառավարության 2015թ.-ի սեպտեմբերի 25-ի թիվ 1141-Ն-որոշմամբ հաստատված՝ ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը:

4 ՀՀ կառավարության 2019թ.-ի հոկտեմբերի 3-ի թիվ 1332-Ն-որոշմամբ հաստատված՝ ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը:

5 **«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին« ՀՀ օրենքը՝ ընդունված 2008թ.-ի մայիսի 26-ին.**

6 **«Հակակառուպցիոն կոմիտեի մասին ՀՀ օրենքը»՝ ընդունված 2021թ.-ի մարտի 24-ին, ինչպես նաև ՀՀ վարչապետի թիվ 661-Ա որոշումը «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի, «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխությունների կատարելու մասին» ՀՀ օրենքի և «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին:**

Ներպետական իրավական հիմքերի տեսանկյունից առաջին հերթին վկայակոչման կարիք ունեն հակակոռուպցիոն ռազմավարությունները: Այսպես, 2019թ.-ի հոկտեմբերի 3-ին ընդունված՝ ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության 2.1-ին կետում արտացոլվել են հետևյալ առաջնահերթ խնդիրները.

1 հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի վերափոխումը և զարգացումը,

2 վարչական կոռուպցիայի հաղթահարումը՝ ոլորտային կոռուպցիոն ռիսկերի վերհանման և դրանց նվազեցման, էլեկտրոնային ժողովրդավարության գործիքների ներդրման ու շարունակական կատարելագործման միջոցով,

3 հանրային ծառայողի օրինավոր և բարեխիղճ կերպարի ձևավորումը՝ հաշվետվողականության, թափանցիկության և բարեվարքության ապահովման համապատասխան կառուցակարգերի ներդրմամբ,

4 ոլորտային իրավական կարգավորումների պարզեցումը և հստակեցումը, կարգավորման ազդեցության գնահատման ինստիտուտի դերի բարձրացումը,

5 բիզնեսի և քաղաքականության տարանջատման հստակ սահմանների ապահովումը, տնտեսական գործունեության ազատության ու ազատ տնտեսական մրցակցության ապահովումը և երաշխավորումը.

6 կոռուպցիոն իրավախախտումների համար պատասխանատվության անխուսափելիության սկզբունքի իրացման երաշխավորումը, օրենսդրության շարունակական կատարելագործումը, այդ թվում՝ կոռուպցիոն հանցագործությունների ցանկի օրենքով սահմանման միջոցով,

7 ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված կառուցակարգերի սահմանումը և ներդրումը, միջազգային չափանիշներին դրանց համապատասխանության ապահովումը, միջազգային համագործակցության ամրապնդումը,

8 հանրային կրթության և իրազեկման միջոցով կոռուպցիայի նկատմամբ ժխտողական վերաբերմունքի սերմանումը, ներառյալ՝ ազդարարման ինստիտուտի նկատմամբ վերաբերմունքի փոփոխման միջոցով, պահանջատեր քաղաքացու ձևավորումը,

9 մոնիթորինգի արդյունավետ մեխանիզմի արդյունքում՝ ժամանակավրեպ միջոցառումների արդիականացման միջոցով կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետության բարձրացումը:

Ավելի վաղ՝ 2015թ.-ի սեպտեմբերի 25-ին ընդունված հակակոռուպցիոն ռազմավարության 28-րդ կետում սահմանված էր, որ Հակակոռուպցիոն քաղաքականությունը պետք է հիմնված լինի ստորև նշված հիմնարար արժեքները կենսագործելու նախապայմանի վրա:

1 **Մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների, օրենքի գերակայություն.** բոլոր պետական մարմինները պետք է հետևեն օրենքների պահանջներին: Այն քաղաքացիները, որոնց իրավունքները խախտվել են, արդյունավետ պաշտպանության միջոցի հնարավորություն պետք է ունենան:

2 **Քաղաքական կամք**. պետական իշխանության բոլոր ճյուղերը՝ օրենսդիր, գործադիր և դատական, լիովին գիտակցում են կոռուպցիայից զերծ հասարակություն ունենալու կարևորությունը և արդյունավետ համագործակցում են՝ ռազմավարության իրականացումն ապահովելու համար:

3 **Հանրային շահի առաջնայնություն**. իշխանության և հանրային ինստիտուտների ներկայացուցիչներն իրենց լիազորություններն իրականացնելիս պարտավոր են հանրային շահը բարձր դասել ցանկացած այլ շահից: Անթույլատրելի է լիազորությունների օգտագործումն իրենց, իրենց ընտանիքների կամ մտերիմների համար չարդարացված նյութական կամ ոչ նյութական օգուտներ կամ առավելություններ ստանալու համար:

4 **Բարեխղճություն.** իշխանության և հանրային ինստիտուտների ներկայացուցիչները պարտավոր են հրապարակել իրենց պարտականությունների օբյեկտիվ կատարման հետ բախման մեջ մտնող ցանկացած անձ-

Ծանոթացեք 2015թ.-ի սեպտեմբերի 25-ին ընդունված հակակոռուպցիոն ռազմավարության շրջանակում հստակեցված Հակակոռուպցիոն քաղաքականության 5 հիմնարար արժեքներին:

նական շահ, ինչպես նաև ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ շահերի բախումից և անհամատեղելի գործունեությունից խուսափելու համար:

5 **Թափանցիկություն.** իշխանության և հանրային ինստիտուտների ներկայացուցիչներն ապահովում են հանրային շահին առնչվող տեղեկատվության մատչելիությունը, որոշումների ընդունման գործընթացի թափանցիկությունը և այդ գործընթացին քաղաքացիական հասարակության մասնակցությունը:

Միաժամանակ, հանրային կառավարման ժամանակակից և արդյունավետ համակարգի ձևավորման համար ռազմավարության իրականացումը պետք է հիմնված լինի հետևյալ սկզբունքների վրա՝

Հիշեք հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 9 սկզբունքները և դրանք մեկնաբանեք փոխկապակցվածության և փոխլրացման համատեքստում:

1 **իրավունքի գերակայություն.** բոլորը հավասար են օրենքի առջև և հավասարապես պաշտպանվում են օրենքով, ապահովված է իշխանությունների լիարժեք բաժանումը, հարգանքը մարդու իրավունքների ու ազատությունների հանդեպ, ինչպես նաև պատասխանատվության անխուսափելիության սկզբունքի հետևողական իրագործումը:

2 **պատասխանատվություն.** հանրային իշխանության մարմինները պատասխանատու են ռազմավարությունից բխող միջոցառումների իրականացման և դրանց արդյունավետության ապահովման համար:

3 **կոռուպցիոն ռիսկերի գնահատում և կառավարում.** հանրային յուրաքանչյուր ինստիտուտ պետք է ունակ լինի իր կողմից իրականացվող կառավարման գործընթացում կանխատեսելու կոռուպցիոն պոտենցիալ ռիսկերը և համարժեքորեն նվազեցնելու դրանք:

4 **ինքնագնահատում.** պետական կառավարման պատասխանատու մարմինների կողմից կոռուպցիոն ռիսկերը պետք է պարբերաբար գնահատվեն՝ այս ռազմավարության և դրա համապատասխան գործողությունների ծրագրի իրականացման նպատակով:

5 **հակակոռուպցիոն ընթացակարգերի մշակման և իրացման համաչափություն.** հանրային ինստիտուտները պետք է մշակեն, ներդնեն և իրականացնեն այնպիսի հուսալի ընթացակարգեր, որոնք համաչափ կլինեն ինստիտուցիոնալ ռիսկերին և տվյալ ինստիտուտի պաշտպանվածության աստիճանին (խոցելիությանը), ինչպես նաև կհամապատասխանեն այս կամ այն ինստիտուտի ռեսուրսներին և կազմակերպական առանձնահատկություններին:

6 **քաղաքական բարձրագույն մակարդակում հաշվետվողականություն.** հակակոռուպցիոն քաղաքականության արդյունավետությունը պահանջում է կառավարման բարձրագույն մակարդակում հանրային բոլոր ինստիտուտներին կոռուպցիայի բացարձակ անհանդուրժողականության հստակ ազդակների հասցեագրում:

Կառավարման յուրաքանչյուր օղակ պետք է նախաձեռնի, ղեկավարի և վերահսկի կոռուպցիայի հակազդման միջոցառումներ՝ գիտակցելով, որ կոռուպցիան հակասում է բարեխղճության և թափանցիկության հիմնարար արժեքներին:

7 **կոռուպցիոն իրավախախտումների կանխարգելում.** առաջնահերթ և պարտադիր է ապահովել կոռուպցիոն իրավախախտումներ ծնող և դրանց նպաստող նախադրյալների վաղ բացահայտումը և ժամանակին չեզոքացումը: Հանրային ինստիտուտները պետք է միջոցներ ձեռնարկեն կոռուպցիայի դեմ պայքարում վստահելի գործընկերներ գտնելու և նրանց հետ համագործակցելու գործում: Գործընկերային կամ այլ համաձայնություններ կնքելիս՝ յուրաքանչյուր ինստիտուտ պետք է հավաստիանա, որ հակառակ կողմն ունի սույն և մյուս սկզբունքներին համապատասխանող քաղաքականություն և ընթացակարգեր:

8 **համագործակցություն և համաձայնեցում.** կոռուպցիայի դեմ պայքարի գործընթացում ներգրավված ինստիտուտները պետք է սերտորեն համագործակցեն՝ ապահովելով նպատակների և դրանց նվաճման միջոցառումների միասնական սահմանումը և համատեղ իրականացումը:

9 **հանրային-մասնավոր գործընկերություն.** անհրաժեշտ է ապահովել կոռուպցիայի դեմ ձեռնարկվող կանխարգելիչ կոնկրետ միջոցների իրականացման գործում քաղաքացիական հասարակության և գործարար հանրության ներգրավվածությունը:

Ինչ վերաբերում է այս առնչությամբ միջազգային իրավական փաստաթղթերին, ապա դրանց շրջանակում կարող են առանձնացվել՝

1 Ստրասբուրգում ստորագրված Եվրախորհրդի Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման և բռնագրավման մասին 1990թ.-ի կոնվենցիան,

2 Վիեննայում ստորագրված՝ Թմրամիջոցների և հոգեներգործուն նյութերի անօրինական շրջանառության դեմ պայքարի մասին ՄԱԿ-ի 1988թ.-ի կոնվենցիան,

3 Պալերմոյում ստորագրված՝ Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մասին ՄԱԿ-ի 2000թ.-ի կոնվենցիան,

4 Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին ՄԱԿ-ի 1999թ.-ի կոնվենցիան,

5 Ֆինանսական միջոցառումների աշխատանքային խմբի (այսուհետ՝ ՖԱԹՖ) 40 հանձնարարականները՝ փողերի լվացման դեմ պայքարի և 8 հատուկ հանձնարարականները՝ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի վերաբերյալ, ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի ահաբեկչության դեմ պայքարի բանաձևերը:

Հայաստանը կազմակերպված հանցավորության դեմ պայքարի, այդ թվում նաև համապատասխան իրավական ակտերի ու միջոցառումների մշակման ուղղությամբ ակտիվ համագործակցություն է ծավալել նաև Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ), Հավաքական անվտանգության պայմանագրի կազ-

մակերպության (ՀԱՊԿ) և Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության (ՍԾՏՀ) շրջանակներում:

ԱՊՀ շրջանակներում կազմակերպված հանցավորության դեմ պայքարում համագործակցությունը համակարգվում է ԱՊՀ մասնակից պետությունների տարածքում կազմակերպված հանցավորության և հանցագործությունների այլ վտանգավոր տեսակների դեմ պայքարի համակարգող բյուրոյի կողմից, որի ներքո գործում է Տվյալների մասնագիտացված բանկ, ինչը մշտապես համալրվում է կազմակերպված հանցավոր խմբերի և դրանց պարագլուխների վերաբերյալ նոր տեղեկություններով:

Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի ոլորտում համագործակցություն է իրականացվում նաև ԱՊՀ մասնակից պետությունների ղեկավարների խորհրդի կողմից հաստատված՝ «2011-2013թթ.-ի հանցավորության դեմ պայքարում համատեղ միջոցառումների միջպետական ծրագրի», «2011-2013թթ.-ի թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց բաղադրիչների անօրինական շրջանառության դեմ պայքարում ԱՊՀ մասնակից պետությունների ծրագրի», «2011-2013թթ.-ի ահաբեկչության և ծայրահեղականության այլ բռնի դրսևորումների դեմ պայքարում ԱՊՀ մասնակից պետությունների ծրագրի», «2009-2011թթ.-ի անօրինական միգրացիայի հակազդման ԱՊՀ մասնակից պետությունների ծրագրի», «2011-2013թթ.-ի մարդկանց առևտրի դեմ պայքարում ԱՊՀ մասնակից պետությունների ծրագրի» շրջանակներում:

Կազմակերպված հանցավորության դեմ պայքարում ակտիվ համագործակցություն է իրականացվում նաև ՀԱՊԿ շրջանակներում, մասնավորապես ՀԱՊԿ Հավաքական անվտանգության խորհրդի 2008թ.-ի սեպտեմբերի, 2009թ.-ի հունիսի և 2010թ.-ի դեկտեմբերի նիստերի որոշումների իրականացմանն ուղղված միջոցառումների ծրագրերի կատարման միջոցով:

Ինչ վերաբերում է կոռուպցիոն հանցագործությունների դեմ պայքարի ինստիտուցիոնալ հիմքերին, ապա այս առնչությամբ էական նորամուծություններից մեկը Հակակոռուպցիոն կոմիտեի ձևավորումն է: 2021թ.-ի մարտի 24-ին ընդունված և 2021թ.-ի հոկտեմբերի 23-ին ամբողջությամբ ուժի մտած՝ «Հակակոռուպցիոն կո-

միտեի մասին» ՀՀ օրենքի (1) հիման վրա ձևավորված Հակակոռուպցիոն կոմիտեն փոխարինեց ՀՀ հատուկ քննչական ծառայությանը: Նշված մարմինը կոռուպցիոն հանցագործություններով մինչդատական քրեական վարույթի հետ մեկտեղ իրականացնում է նաև օպերատիվ-հետախուզական գործունեություն (4-րդ հոդված): Նշված մարմնի ձևավորումը նպատակ է հետապնդում ստեղծել կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման գործառույթով և անկախության երաշխիքներով օժտված կենտրոնացված մարմին, որը գործում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կայացմանն ու գործունեությանը զուգահեռ: Այս մարմնի ձևավորումը բխում է նաև ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններից:

Ավելի վաղ՝ 2019թ.-ի հունիսի 24-ին ՀՀ վարչապետի թիվ 808-Ն որոշմամբ ստեղծվել է Հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդ, որի հիմնական գործառույթն է քննարկել հակակոռուպցիոն ռազմավարությունները, ինչպես նաև հակակոռուպցիոն քաղաքականությանն առնչվող իրավական ակտերը, հակակոռուպցիոն ռազմավարությունների հիման վրա մշակված ոլորտային ծրագրերը, հակակոռուպցիոն ռազմավարություններից և ՀՀ ստանձնած համապատասխան միջազգային պարտավորություններից բխող միջոցառումների իրականացման գործընթացները, հակակոռուպցիոն ռազմավարությունների և ծրագրերի կատարողականները և մոնիթորինգի արդյունքները, կոռուպցիայի դեմ պայքարի գործընթացում միջազգային միջկառավարական կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, գործարար ոլորտը ներկայացնող կազմակերպությունների, հակակոռուպցիոն քաղաքականության իրականացման գործում դերակատարում ունեցող մարմինների հետ համագործակցության արդյունքները, կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում ներգրավված միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության ընթացքը (կից N2 Հավելվածի 4-րդ կետ):

Առանձին ոլորտներում հակակոռուպցիոն քաղաքականությունն իրականացնում են պատասխանատու մարմինները (նախարարություններ, ՀՀ կառավարությանն առընթեր պետական մարմիններ): Պատասխանատու մարմիններն ապահովում են ոլորտային ծրագրերի մշակումն ու լիարժեք իրականացումը: Տվյալ

մարմիններում նշանակվում են հակակոռուպցիոն ծրագրերի իրականացման պատասխանատուներ (անձ/ստորաբաժանում): Պատասխանատուների պաշտոնների անձնագրերում (աշխատանքի նկարագիր) պետք է ներառվեն հակակոռուպցիոն ծրագրերի իրականացումից բխող գործառույթներ: Յուրաքանչյուր պատասխանատու մարմնում պետք է նշանակվի նաև հակակոռուպցիոն ծրագրերի իրականացումը համակարգող պաշտոնատար անձ՝ առնվազն աշխատակազմի ղեկավարի կամ մարմնի ղեկավարի տեղակալի մակարդակով:

Կոռուպցիայի դեմ պայքարում կարևոր ինստիտուցիոնալ տարրերից է նաև Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը: Ընդ որում, այս առումով հիշատակման է արժանի այն հանգամանքը, որ 2020թ.-ի մարտի 25-ի՝ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով ներդրվեցին բարեվարքության ուսումնասիրության վերաբերյալ հատուկ կարգավորումներ: Մասնավորապես, նշված օրենքի 25.1-ին հոդվածի համաձայն՝

Ծանոթացեք օրենսդրական կարևոր փոփոխությունների:

«(...) 2. Բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկում լրացման ենթակա տվյալներն են՝

1) թեկնածուի և «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի իմաստով նրա ընտանիքի անդամների գույքային դրության՝ գույքի և եկամուտի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն.

2) թեկնածուի կրթության, աշխատանքային գործունեության վերաբերյալ տեղեկատվություն, այդ թվում՝ ուսումնական հաստատության, աշխատավայրի (նախկին և ներկա) անվանումը (անվանումները), զբաղեցրած պաշտոնը (պաշտոնները).

3) քրեական, վարչական կամ կարգապահական պատասխանատվության ենթարկված լինելու վերաբերյալ տեղեկատվություն.

4) «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի իմաստով հանրային պաշտոն զբաղեցնող անձանց հետ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի իմաստով մերձավոր ազգակցությամբ և խնամիությամբ կապված լինելու վերաբերյալ տեղեկատվություն.

5) քրեական ենթամշակույթին հարելու վերաբերյալ տեղեկատվություն:(…)

5. (…) [Բ]արեվարքության ուսումնասիրությունը ներառում է՝

1) բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկում ներկայացված տվյալների արժանահավատության ստուգում.

2) անձի կողմից նախկինում քրեական, վարչական կամ կարգապահական պատասխանատվության ենթարկված լինելու հանգամանքի, այդ թվում՝ կոռուպցիոն գործարքներում ներգրավվածության, նրա կողմից վարքագծի կանոնների պահպանման, շահերի բախման, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների խախտում կատարած լինելու հանգամանքների ուսումնասիրություն.

3) անձի վերաբերյալ զանգվածային լրատվական միջոցներում, ինչպես նաև սոցիալական ցանցերում հրապարակված տեղեկությունների ուսումնասիրություն.

4) անձի գույքային դրության՝ փաստացի ստացած եկամուտներին համապատասխանության, ինչպես նաև նախկինում ներկայացված հայտարարագրերի ուսումնասիրություն.

5) անձի աշխատանքային գործունեության վերաբերյալ տեղեկությունների ուսումնասիրություն.

6) անձի քրեական ենթամշակույթին հարելու հնարավորության ուսումնասիրություն: (…)»:

ՀՀ-ում գործում են բազմաթիվ պետական մարմիններ, որոնք իրենց գործառույթներն ու լիազորություններն իրականացնելիս նպաստում են կոռուպցիայի կանխարգելմանը:

Կոռուպցիայի դեմ պայքարում ներգրավված են հետևյալ միջազգային կառույցները՝ OECD, GRECO, UNODC, INTERPOL, EGMONT խումբը:

OECD-ն տնտեսական համագործակցության և զարգացման խումբն է, որը մոնիթորինգային եղանակով դիտարկում է տարբեր երկրներում կոռուպցիայի և կաշառակերության վիճակին: ՀՀ-ի նկատմամբ մոնիթորինգ իրականացվում է Ստամբուլյան գործողությունների ծրագրի շրջանակներում: Այն իրենից ներկայացնում է Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի (ՀԿՑ) շրջանակներում տրամադրվող ծրագիր՝ Հայաստանի վերաբերյալ մոնիթորինգի պարբերական զեկույցների տեսքով: Այդ ծրագրով նախատեսվում են կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում Հայաստանի գրանցած հաջողություններն ու առկա խնդիրները: Մասնավորապես, առանձնացվում են հանրային ծառայության և քաղաքացիական ծառայության ոլորտների օրենսդրության մշակումը, Էթիկայի և շահերի բախման ոլորտի օրենսդրական բարեփոխումները, ապօրինի հարստացման քրեականացումը, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ստեղծումը, ազդարարման համակարգի ստեղծումը, իրական սեփականատերերի ինստիտուտի ներդրումը գնումների ոլորտում: Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումների մեծամասնությունն արդեն իրացված է օրենսդրությունում կամ պրակտիկայում:

GRECO-ն Եվրոպայի խորհրդի՝ Կոռուպցիայի դեմ պայքարի երկրների խումբն է, որը ևս մոնիթորինգ է իրականացնում՝ հիմնականում ԵՄ անդամ և այդպիսի հավակնություն ունեցող երկրներում կոռուպցիայի վիճակի վերաբերյալ:

ՄԱԿ-ի կազմակերպված հանցավորության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի կառույցն (UNODC) առանձնահատուկ ուշադրություն է դարձնում կոռուպցիայի վիճակի մոնիթորինգին Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիան վավերացրած երկրներում:

INTERPOL-ը՝ միջազգային ոստիկանական գործառույթներ իրականացնող կառույցը մեծ դերակատարություն ունի կոռուպցիոն վարքագիծ դրսևորած և այլ երկրներում գտնվող անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու գործընթացն ապահովելու գործընթացում:

EGMONT խումբը ձևավորվել է ֆինանսական հանցագործությունների քննությունն արդյունավետ դարձնելու համար, հատկապես փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման գործերը քննելիս:

Կոռուպցիայի դեմ պայքար մղելու միջոցառումները ենթադրում են այնպիսիք, որոնք ուղղված են՝ պետական կառույցների թափանցիկության, հաշվետվողականության բարձրացմանն, կոռուպցիոն հանցագործությունների քննության արդյունավետության բարձրացմանը, կոռուպցիայի կանխարգելման գործընթացում ինչպես ՀՀ, այնպես էլ այլ երկրների պետական կառույցների, մասնավոր ոլորտի կառույցների և անհատների համագործակցության ու փոխօգնությանն արդյունավետության բարձրացմանը:

Կոռուպցիայի դեմ պայքարում կարևորվում է համագործակցություն մասնավոր ոլորտի կառույցների, այդ թվում՝ բանկերի, այլ ֆինանսական ինստիտուտների, դրանցում աշխատող անհատների հետ՝ խոշոր կամ կասկածի տեղիք տվող գործարքների հաղորդումը (այդ թվում՝ ոչ պաշտոնական) երաշխավորելու նպատակով: Այդ հարցերը կարգավորում են ստացել «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքում:

Կոռուպցիայի դեմ պայքարում կարևոր նշանակություն ունի նաև պետական մարմինների ներքին վերահսկողության մեխանիզմների օգտագործումը, որոնց թվում պետք է առանձնացնել ազդարարման ինստիտուտի ներդրումը, որը կանոնակարգված է «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքով:

Այս մասին առավել մանրամասն տեղեկություններ կստանաք դաս 6-ում:

ՀՂՈՒՄՆԵՐ

Հղումները նախատեսված են Ձեզ հետաքրքրող նյութերի մասին հավելյալ գիտելիքներ ստանալու համար

1 «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենք,
https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=156524
(վերջին անգամ դիտվել է 26.01.2022թ.)

ԲԱՌԱՐԱՆ

Այս հատվածում ներկայացված են դասի նյութին առնչվող առանցքային եզրույթները և դրանց բացատրությունները: Դրանք Ձեզ կօգնեն դասի նյութն ավելի հեշտ ընկալել: Եզրույթների բովանդակությունն ուշադրությամբ ուսումնասիրելու համար անհրաժեշտ է մոտ 10 րոպե:

ԲԱՐԵԽՂՃՈՒԹՅՈՒՆ — իրենց պարտականությունների օբյեկտիվ կատարման հետ բախման մեջ մտնող ցանկացած անձնական շահի հրապարակման պարտավորությունն է իշխանության և հանրային ինստիտուտների ներկայացուցիչների, ինչպես նաև շահերի բախումից և անհամատեղելի գործունեությունից խուսափելու համար բոլոր անհրաժեշտ միջոցների ձեռնարկումը:

ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ — Հանրային շահին առնչվող տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացի թափանցիկության և այդ գործընթացին քաղաքացիական հասարակության մասնակցության ապահովումն է իշխանության և հանրային ինստիտուտների ներկայացուցիչների կողմից:

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ — Սկզբունք է, համաձայն որի բոլորը հավասար են օրենքի առջև և հավասարապես պաշտպանվում են օրենքով, ապահովված է իշխանությունների լիարժեք բաժանումը, հարգանքը մարդու իրավունքների ու ազատությունների հանդեպ, ինչպես նաև պատասխանատվության անխուսափելիության սկզբունքի հետևողական իրագործումն է:

ՀԱՆՐԱՅԻՆ ՇԱՀԻ ԱՌԱՋՆԱՅՆՈՒԹՅՈՒՆ — Իշխանության և հանրային ինստիտուտների ներկայացուցիչներն իրենց լիազորություններն իրականացնելիս պարտավոր են հանրային շահը բարձր դասել ցանկացած այլ շահից: Անթույլատրելի է լիազորությունների օգտագործումն իրենց, իրենց ընտանիքնե-

րի կամ մերձավորների համար չարդարացված նյութական կամ ոչ նյութական օգուտներ կամ առավելություններ ստանալու համար:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՄՔ — Կոռուպցիայից զերծ հասարակություն ունենալու կարևորության գիտակցումն է պետական իշխանության բոլոր՝ օրենսդիր, գործադիր և դատական ճյուղերի կողմից և նրանց արդյունավետ համագործակցությունն է՝ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացումն ապահովելու համար: